

Ծաղկաձորի ճոպանուղու կառավարման մոդելը պետք է փոխվի մասնավորից պետականի. Կոտայքի մարզպետի մոտեցումն է:

Ռոմանոս Պետրոսյանը ճոպանուղու սեփականատիրոջ ու շահագործողի փոփոխության կարիք է տեսնում:

«Ռադիոլուրը» հետաքրքրվել է ճոպանուղու ներկա խնդիրներով ու դրան առնչվող ծրագրերով՝ փորձելով նաև պարզել, ինչն է հարուցել ճոպանուղուց օգտվող առողջապահության նախարարի դժգոհությունը:

Կոտայքի մարզպետի համար առնվազն տարօրինակ է, որ հանրապետության ամենալուրջ զբոսաշրջային օբյեկտներից մեկից՝ Ծաղկաձորի ճոպանուղուց ստացվող խոշոր եկամտից ոչ մի դրամ չի ուղղվում քաղաքի բյուջե ու որեւէ կերպ չի նպաստում առնվազն տուրիստական ենթակառուցվածքների զարգացմանը: Փոփոխություն է պետք՝ ասում է մարզպետը «Ռադիոլուրի» հետ զրույցում:

«Պարզապես պետք է շահագործման եւ տնօրինման իրավունքը վերապահվի կամ պետական որեւէ ընկերության, կամ համայնքային ենթակայության տակ գործող կոնցեսիոն համաձայնագրով որեւէ ընկերության: Իսկ շահաբաժնից որոշակի մաս պետք է ուղղվի այն քաղաքի եւ տուրիստական այն գոտու ենթակառուցվածքների զարգացմանը, որտեղ շահագործվում է, իմ սուբյեկտիվ գնահատմամբ, գերշահույթ հետապնդող օբյեկտը»: Կոտայքի մարզպետը պատրաստվում է կառավարությանը ներկայացնել Ծաղկաձորի ճոպանուղու կառավարումը մասնավորից պետականի փոխանցելու առաջարկ: Ճոպանուղին, ըստ իրավաբանական անձանց պետքեզիստրի, շահագործում է «Լեռնատուր» ընկերությունը, որի 50% բաժնեմասը պատկանում է Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեին: Իսկ կոմիտեի նախագահը պատգամավոր Գագիկ Օառուկյանն է: Ըստ մամուլում շրջանառվող տեղեկությունների՝ ճոպանուղու բաժնեմասերի մյուս 50%-ը պատկանում է «Հեսպեր Վենչըրս» ՍՊԸ-ին՝ գրանցված է ԱՄՆ-ի Արկանզաս նահանգում: Մարզպետ Պետրոսյանը փոխանցում է այս մասով իրեն հայտնի տեղեկությունը, բայց եւ շեշտում՝ դա դեռ ճշգրտման ենթակա է: «Ճոպանուղու իրավական առումով պատկանելությունն այս պահին չեմ կարող ասել, բայց փաստացի այն շահագործվում է Օլիմպիական կոմիտեի կողմից արտոնված ինչ-որ ՍՊԸ-ի կողմից, եւ, իմ ունեցած տվյալներով, վերջինս «Մուլտի Գրուպ» կոնցեռնի մաս է կազմում: Իմ ունեցած տվյալներով»:

Ռոմանոս Պետրոսյանը դեռ մանրամասն չի ուսումնասիրել, թե մասնավոր ընկերության կողմից ճոպանուղու շահագործման պայմանագիրը ինչ ժամկետեր ու

պարտավորություններ է ենթադրում, ու որքանով է իր առաջարկն ուղղակիորեն առնչվելու Գազիկ Ծառուկյանին: Առաջիկայում կուսումնասիրեն ու ամենաարդյունավետ լուծումները կառաջարկեն՝ վստահեցնում է:

Մարզպետը խնդիրներ է տեսնում ոչ միայն օդային փոխադրամիջոցի կառավարման, այլև գնային քաղաքականության առումով: Ճկուն չէ՝ ասում է, Ծաղկաձորում մեկ օրով հանգստացողների համար առանձին գներ են պետք, եվրոպական լավագույն փորձն ու նոր լուծումներ են պետք: Ճոպանուղին շահագործող ընկերության եւ այլ տնտեսավարողների հետ փոխհարաբերություններում եւս մութ կետեր են հնարավոր չի բացառում մարզպետը: «Ճոպանուղու վերին հատվածներում ժամանցի կազմակերպման, հյուրերի կոմֆորտի ապահովման, լանջ-կաֆետերիաների բավականին մեծ պահանջարկ-պակաս կա, սակայն չգիտեմ ինչու, որեւէ տնտեսավարող հայտ չի ներկայացնում: Այստեղ եւ որոշակի միտում եմ տեսնում: Սակայն միայն խորագնին ուսումնասիրությունն իրականացնելուց հետո կարող եմ հանդես գալ ինչ-որ հայտարարությամբ»:

Իսկ ճոպանուղու տնօրեն Աշոտ Կարապետյանը «Ռադիոլուրին» վստահեցնում է՝ իրենք էլ զարգացման իրենց ծրագրերն ունեն: Փակագծերը դեռ չեն բացվում, բայց խոստումներ հնչում են: «Մի փոքրիկ գաղտնիք բացեմ ձեզ՝ զարնանը մեծ աշխատանքներ ունենք կատարելու ճոպանուղու հետ կապված՝ ավելացնել, եւ այլն, եւ այլն: Բայց թող դա դեռ գաղտնիք մնա, կանենք՝ անակնկալ թող լինի: Շատ բաներ կան անելու»:

Ծաղկաձորում իր հանգիստն անցկացնող առողջապահության նախարարն օրեր առաջ ֆեյսբուքում գրառմամբ տարակուսել էր, թե ինչու է ընթացքի պահին ճոպանուղին կանգ առել, ու 20-25 րոպե մարդիկ մնացել են ճոպանուղու վրա սառած՝ այդպես էլ չիմանալով պատճառը: Արսեն Թորոսյանը դժգոհել էր նաեւ Ծաղկաձորի դահուկային գոտում աշխատանքների կազմակերպումից՝ նկատելով, որ դահուկորդներն ավելի շատ ժամանակ են ծախսում տոմս գնելու և ճոպանուղու հերթերի մեջ, դանդաղընթաց ճոպանուղիների վրա, քան սահելու, չնայած պետք է լիներ հակառակը:

Ճոպանուղու տնօրենը խնդրին արձագանքում է այսպես: «Այո, նման բան եղել է մեզ մոտ: Բայց ճոպանուղու կանգը տեւել է ոչ թե 20 րոպե, այլ 12-13 րոպե: Մեզ մոտ քամու թույլատրելի արագությունը 13-15մ/վ է, բայց քամու արագությունն այդ պահին գերազանցել էր դա՝ հասնելով 23-24 մ/վ-ի: Մարդկանց անվտանգությունից ելնելով՝ ինքս էի հրահանգել անջատել ճոպանուղին ու տարհանել մարդկանց»: Ճոպանուղու

տնօրեն Աշոտ Կարապետյանը փորձում է նաև փարատել մամուլում պարբերաբար հնչող մտահոգությունները, թե ճոպանուղին անվտանգության փորձաքննություն չի անցնում ու վտանգավոր օբյեկտ է: «Միանշանակ, ճոպանուղին անվտանգության խնդիր չունի: Մեր կարգախոսն է՝ մեր հաճախորդների, մեր հյուրերի անվտանգությունը մեզ համար ամենակարևորն է: ԱԻՆ-ի հետ մենք անցել ենք փորձաքննություն 3-4 ամիս առաջ»:

Կոտայքի մարզպետն իր հերթին բացատրում է՝ տեխնիկական անվտանգության մասով փաստաթղթեր ու բացատրություններ պահանջելու իրավասություն իրենք չունեն, քանի որ տեխնիկական սարքիության եւ ստուգումների պատասխանատուն ԱԻՆ-ի մարզային կառույցն է: Բայց, որպես մարզի ղեկավար, ինքը պահանջել է անվտանգության հավաստիացումներ, որոնք եւ ստացել է: Իսկ ճոպանուղուն առնչվող մյուս հարցերի պատասխաններն ու լուծումները մարզպետը դեռ փնտրում է:

Աղբյուրը՝ armradio.am